տանի համալսարանի գրական բաժնի համար, երկուսը՝ Մոսկվայի եւ մէկը Լենինգրադի:

Ե.– Շիրվանզադէի այրիին նշանակել անհատական կենսաթոշակ 400 բուբլի ամսական:

## ԲԷՑՐՈՒԹԻ ՀԱՅ ՃԵՄԱՐԱՆԸ

1930 թ. տարեգլխին էր, որ, համեստ եւ անշուք պայմաններում, հիմնուեց այս հաստատութիւնը Լեւոն Շանթի եւ Նիկոլ Աղբալեանի գլխաւորութեամբ եւ Համազգայինի ու Հ. Կ. Խաչի նիւթական աջակցութեամբ: Վեցերորդ տարեշրջանին ահա ճեմարանը տալիս է իր առաջին հունձքը – 8 ընթացաւարտներ:

Այս տարեշրջանին Հայ ճեմարանը ունեցել է ինը դասարան, որոնցից երկուսը՝ պատրաստական, չորս հիմնական եւ երեք լսարան: Այս վերջինները ներկայացնում են միջնակարգ կրթութեան վերին երեք տարիները:

Աշակերտութեան թիւը եղել է 94, որից 20–ը աղջիկ, 74–ը մանչ: Լսարաններում եղել է 20 սովորող:

Ըստ ծագման վայրի այս 94 հոգին բաժանւում են հետեւեալ կերպով. 18 հոգի Հայկական Բարձրաւանդակից, վեց վիլայէթներից եւ Կովկասից, 44 Թիւրքիայի արեւմտեան նահանգներից ու ծովեզերքից, 11 Կիլիկիայից եւ 21՝ Հիւսիսային Սիւրիայից ու Միջագետքից:

Ուսուցչական մարմինը կազմուած է եղել 13 հոգուց, որոնցից 8 համալսարանական, 3 միջնակարգ եւ 2 նախակրթարանի պատրաստութեամբ:

Ճեմարանի տարեկան մուտքը եղել է 7146 սիւր. ոսկի, որից աշակերտական դրոշակներ 1965 ոսկի, Հայ կարմիր խաչից 1887 ս. ոսկի, Համազգայինից 1600 ս. ոսկի, նուէրներ եւայլն: Ելք եղել է 6929 ս. ոսկի, որից ուսուցիչների ռոնիկ 3885 ս. ոսկի, գիշերօթիկների խոհանոցի ծախք 1846, տան վարձք եւ գոյք 893 եւայլն:

Ցառաջիկայ տարուան համար նախատեսւում է շուրջ 100 աշակերտ եւ 6715 ս. ոսկի բիւդջէ: